ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԸ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 30-ԱՄՅԱԿԸ
(1945—1975)

Մեր մեծ ու փառապանծ հայրենիքը նշում է Հայրենական պատերազմում տարած պատմական հաղթանակի 30-ամյակը:

Մայիսի 9-ն է, մեծ հաղթանակի բերկրանիթ տարեդարձը:

Հիշարժան այդ թվականն աշխարհի բոլոր խաղաղասեր մարդկանց հիշողության մեջ մնում է իբրև մեր բազմազգ երկրի ժողովուրդների անմահ սխրագործության վառ վկայություն, հաղթանակ, որն ազատություն բերեց նաև Եվրոպայի մի շարք ստրկացած ժողովուրդներին ու փրկեց մարդկային քաղաքակրթությունը:

1941—1945 թվականներին, Հայրենական պատերազմի օրերին, առավոր փորձություն էր կախվել մեր հայրենիքի վրա:

Պատերազմ էր, առավոր կռիվ, որն իր նմանը չուներ աշխարհի և ժողովուրդների պատմության մեջ:

Ու մարտի ելան մեր հայրենիքի բոլոր ժողովուրդները միասիրտ, միակամ՝ պաշտպանելու մեր հայրենի հողը, մեր մշակույթը, մեր ազատությունն ու արժանապատվությունը:

Հայրենական պատերազմում և տարված պատմական հաղթանակի մեջ իրենց արժանի ու փառավոր տեղն ունեն միութենական բոլոր ժողովուրդները, որոնցից յուրաքանչյուրն իր մարտական ավանդն է մուծել հաղթանակի համընդհանուր գանձարանի մեջ:

Հայրենիքի սերը, ընտանիքի՝ սուրբ օջախի պատիվն ու ապահովությունը, մեր հոգեվոր, մշակութային արժեքների հանդեպ սերն ու պաշտամունքը և ազատության, անկախության նկատմամբ մարդասիրական վեհ ու ազնիվ գաղափարները մեր հայրենիքի մարդկանց ներշնչում էին կորով, ուժ, արդար պայքարի գիտակցության զգացում և, մանավանդ, հաղթանակի անկոտրում հավատ:

Կռվում էին կողք-կողքի «Մեծ Տան զավակները», ռուսն ու ուկրաինացին, ուզբեկն ու թաթարը, հայն ու վրացին և եղբայրական մյուս ժողովուրդները՝ ուս-ուսի, եղբայրորեն, համերաշխ ու մարտական:

Բովանդակ ժողովուրդը թե՛ ռազմանակատում, թե՛ թիկունքում ցույց տվեց անկրկնելի հերոսություն, հայրենիքին նվիրվածության սքանչելի օրինակներ: Անհեղ պատերազմի այդ հրդեհներում և մրրիկներում է՛լ ավելի կոփվեց և անխորտակելի դարձավ եղբայրական ժողովուրդների անքակտելի բարեկամությունը:

Բոցերի ու արյան մեջ հերոսանում էին մեր հայրենիքի զավակները: Հաղթանակի ճանապարհը երկարատև էր, դաժան ու դժվարին: Մեր ժողովուրդն անցավ չորս տարվա դաժան պայքարի միջով, կրեց հընկայական զրկանքներ, տվեց անթիվ զոհեր:

Հաղթանակը ձեռք բերվեց արյան ճանապարհով, մեր ժողովրդի կամքի ու պատմական սխրանքի միջոցով: Ընկան շատերը հերոսի մահով՝ հաղթանակի հավատը սրտերում:

Սովետական մարդկանց տարած պատմական հաղթանակն անմոռանալի է բոլոր

նրանց համար, ովքեր սիրում են իրենց հայրենիքն ու ազատությունը:

Հայրենիքը չմոռացավ իր հերոս զավակների սիրագործությունը: Հայրենիքի համար մղված պայքարում ընկած մարտիկների հիշատակը սուրբ է մեզ համար և հավետ անմոռաց: Դա մշտական հիշեցում է մեզ և գալիք սերունդների համար: Նրանց՝վ է լուսավորվում այսօր մեր հաղթական երթի ճանապարհը: Ընկան մեր հերոսները մարտի դաշտում՝ չխնայելով իրենց կյանքը, ընկան «իմացեալ մահով»՝ մեր այսօրվա գեղեցիկ ու խոստումնալից կյանքի համար: Ընկան հերոսները, բայց մնաց ու հաղթանակեց հայրենիքը, որը չմոռացավ երբեք իր զավակներից և ո՛չ մեկին:

Զոհվածներն ապրում են հավերժ մեզ հետ, և նրանց հիշատակի ոգեկոչումով ու արյան հեղմամբ է՛լ ավելի է գեղեցկանում հաղթանակի այս օրը և հաղթանակի ամեն մի տարի:

Մեծ հաղթանակի օրն է այս տոնական...

«Օ՜ր մայիսի, օ՜ր հաղթության»...

Երեսուն տարիներ են մեզ բաժանում պատմական այդ օրից, երբ մեծ հաղթանակ տարավ մեր ժողովուրդը՝ ջախջախելով բռնակալությունը, բարբարոսությունը, հեռադիմությունը:

Որքան հեռանում ենք Հայրենական պատերազմի աներ օրերից, ծանր իրադրություններից, այնքան ավելի է վեհանում և պայծառանում հաղթանակի բերկրանքը, մեր ժողովրդի անմահ սխրանքի մեծությունը:

Հայրենական պատերազմի ժամանակաշրջանն ու նրա իրադրություններն այսօր արդեն ջերմ, կենդանի, ուսանելի և անմոռանալի պատմություն են: Ու պատմության դասերը չեն մոռացվում:

Պատմությունը գիտություն է, իսկ հայրենասիրությունը՝ առաքինություն: Ահա թե ինչու մեր հերոս ժողովուրդը, պատերազմից վերադարձողների հետ միասին, անցած երեսնամյակի ընթացքում հանդես բերեց պատերազմական ժամանակի հստակ արիություն և հերոսություն, մեր նոր ու պայծառ կյանքի կերտման բոլոր ձևերի մեջ: Նրա արձանագրած յուրաքանչյուր հայրենաշեն նվաճումների մեջ ներկա է մեր հերոսների սխրագործությունն ու հերոսությունը, հերոսներ, որոնք փառքով անցան Հայրենական պատերազմի հաղթանակի դժվարին ճանապարհը, չտեսան հաղթանակի բերկրանքը, բայց ընկան հավատով և հույսով հաղթանակի ճանապարհին:

Հաղթանակի լավագույն արգասիքը մեր այսօրվա պայծառ ու ապահով կյանքն է: Մեր հերոսները մարտի դաշտում, բոց ու արյան մեջ, երազում էին խաղաղ աշխատանքի, երջանկության, սիրո, ազատության մասին՝ հանուն որոնց նրանք ընկան մարտի դաշտում:

Մեր այսօրվա կյանքի ապահովությունն ու մեծագործությունը և՛ մեր հերոսների հիշատակի պահպանումն է, և՛ նրանց սխրանքի շարունակումը:

Այո՛, խաղաղ, հայրենաշեն աշխատանքում է՛լ ավելի է կոփվում ու ամրանում հայրենական մեծ հաղթանակը:

Հաղթանակի վեհությունը որոշվում է նաև նրա համաշխարհային պատմական նշանակությամբ: Հաղթանակը բաց արեց շատ երկրների ժողովուրդների համար ազատության, անկախության, ազգային-ազատագրական շարժման և հառաջադիմության ուղին: Հայրենական պատերազմում ձեռք բերված հաղթանակով որոշվում էր ոչ միայն բազում ժողովուրդների ճակատագրերը, այլ նաև քաղաքակրթության բախտը, մարդկության ներկա և եկող սերունդների բախտը:

Ֆաշիզմի դեմ մղված ազատագրական մարտերում և մեծ հաղթանակի մեջ եղբայրական ժողովուրդների շարքերում մարտական իր արժանի տեղն է գրավել նաև հայ ժողովուրդը, որը ոգևորությամբ և ազնվությամբ կատարեց իր ժողովրդական, քաղաքացիական և հայրենասիրական-պետական պարտականությունները:

Հայրենական պատերազմին մասնակցել են ավելի քան 600 հազար հայ ռազմիկներ: Պատերազմի ընթացքում կազմակերպվեցին 89-րդ, 408-րդ և 409-րդ հայկական հրաձգային դիվիզիաները, որոնք հերոսական քաջագործություններով պսակեցին իրենց մարտական ուղին և «փառքով դրեցին սուրը պատյան»: Շուրջ 70 հազար հայորդիներ պարգևատրվեցին մարտական շքանշաններով և մեդալներով: 104 հոգի արժանացան հերոսի կոչման: Իրենց ռազմագիտական հմտությամբ, սխրանքով, զինվորական հրամանատարական բարձրագույն կոչման հասան ավելի քան 50 հայազգի անվանի զորավարներ:

Մեր ժողովրդի քաջարի զավակները Կովկասյան նախալեռներից մինչև Բեռլին հասան փառքով ու հերոսությամբ և իրենց մարտական երթը նշանավորեցին դժվարին հաղթանակներով, անօրինակ սխրանքով՝ հավատարիմ իրենց հայրենասեր նախնիների զինվորական ավանդներին:

Հայրենական մեծ հաղթանակի մեջ իր արժանի բաժինն ունեցավ Մայր Աթոռը ու նրա օրհնության ներքո նաև՝ սփյուռքի հայությունը:

Ս. Էջմիածինը, որպես հայրենասիրա-

կան վառ ու պատմական օջախ, միշտ օրհնել է հայ ժողովրդի հերոսական դիմադրության ոգին, ներշնչել ազգային անկախության գաղափարը և խաչն ու Ավետարանը ձեռքին հայ զորքն առաջնորդել դեպի հաղթություն՝ Վարդանանց օրերից մինչև Սարդարապատի հերոսամարտը:

Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերից Մայր Աթոռը հայրենիքի կողքին, իր ժողովրդի հետ միասին, հանդես եկավ հայրենանվեր իր գործունեությամբ՝ հավատարիմ իր պատմությանն ու հայրենասիրական առաքելությանը:

Մայր Աթոռն իրավունք չուներ լռելու, երբ մի անգամ ևս մեր սիրելի հայրենիքն ու ժողովուրդը կանգնել էին մեծ վտանգի առաջ:

Հայրենական պատերազմի առաջին օրերից, 1941 թվականի հուլիսի 30-ից, ազգընտիր տեղակալ **տ. Գևորգ արքեպ. Զորեքչյանը** հանդես եկավ հայ ժողովրդին ուղղված հայրենասիրական, սրտառուչ կոչով՝ դատապարտելով պատերազմը և ողջ հայությանը, որ ի հայրենիս և մանավանդ ի սփյուռս աշխարհի, համախմբելով հայրենիքի շուրջ: Նա պատգամում էր այդ աներեղ ժամին.

«Թող մեր արյունը թափվի մարտիրոսների արյան նման, միայն թե մեր հայրենիքն ու եկեղեցին չընկնի հեթանոսների ձեռքը...»: «Հայը, բացի Սովետական Հայաստանից, չունի ա՛յլ հայրենիք». «աջակցել Խորհրդային Միության նշանակում է աջակցել հայրենիքին: Խորհրդային Միության հաղթանակը՝ հաղթանակն է նաև հայ ժողովրդի»:

Ազգընտիր տեղակալը հայրենասիրական այսպիսի կոչերով դիմում էր սփյուռքի հայությանը՝ կազմակերպելու համար «Սասունցի Դավիթ» անվամբ տանկային շարասյան կառուցումը՝ որպես սփյուռքի նվերը հայրենիքին:

Սփյուռքը ջերմորեն արձագանքում էր հայրենասեր կաթողիկոսական տեղակալի կոչին:

Սփյուռքի մեր նվիրապետական Աթոռները, թեմերը, թեմական կազմակերպությունները, հայրենակցական միությունները և բովանդակ ժողովուրդը մեկ մարդու նման ոտքի էր կանգնում ազգընտիր տեղակալի հայրենասիրական կոչերով ոգևորված և իր բարոյական, նյութական աջակցությունն էր բերում, սիրով և զոհողությամբ, հայրենիքի հաղթանակին: Ամեն կողմ ստեղծվում են հանգանակիչ հանձնաժողովներ, որոնց սեպուհ պարտքն է լինում՝ օգնել հայրենիքին և ռազմաճակատին:

«Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 8), մեծ մասամբ առաջին անգամ լինելով, տպագրվում են տ. Գևորգ արքեպ. Զորեքչյանի հայրենասիրական կոչերը, Հայրենական պատերազմում Մայր Աթոռի, սփյուռքի մեր նվիրապետական Աթոռների, թեմերի հայրենասիրական գործունեությանը նվիրված փաստաթղթեր, որոնցում հստակորեն երևում է, որ Մայր Աթոռն ու սփյուռքը գիտակցում էին, որ 1941—1945 թվականների ծանր օրերին որոշվում էին նաև ընդհանրապես Հայաստանի և ողջ հայ ժողովրդի բախտն ու ապագան, և թե որքան կարևոր էր նաև հայ եկեղեցու, սփյուռքի բովանդակ հայության բարոյական ու նյութական աջակցությունը սրբազան այդ պատերազմում՝ ի պաշտպանություն մեր հայրենիքի և ժողովրդի:

Մայր Աթոռի և սփյուռքի հայության հայրենասիրական գործունեությունը ջերմորեն արժանանում էր հայրենի և կենտրոնական կառավարության երախտագիտությանն ու շնորհակալությանը, ինչպես հաստատում են հրատարակվող փաստաթղթերը:

Մեծ հաղթանակի օրերից հետո, անցնող 30 տարիների ընթացքում, Մայր Աթոռը շարունակեց իր հայրենասիրական գործունեությունն ու առաքելությունը նաև խաղաղ պայմաններում, մանավանդ Տ. Տ. Վազգեն Ա. հայրենասեր կաթողիկոսի գահակալության 20 տարիների ժամանակամիջոցում:

Մայր Աթոռի այս օրերի հայրենասիրական գործունեությունը ճշմարիտ արտահայտությունն է անցյալի մեր մեծ հայրապետների եկեղեցաշեն ու հայրենանվեր գործունեության, հայրապետներ, որոնք ճիգ ու ջանք չեն խնայել՝ իրենց ժամանակի և պայմանների պահանջների համաձայն ծառայելու հայ ժողովրդին, նրա հայրենիքին և մարդկության նվիրական իղձերի կենսագործմանը:

Փա՛ռք Մեծ հաղթանակը կերտող մեր հայրենիքին, մեր մարտիկներին և ժողովրդին:

Ա. Հ.